ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/22 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (անհամապատասխանությունների շտկման) գնահատման նիստի

ք. Երևան 05 հունիսի 2019թ.

ժամը. 12:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (անհամապատասխանությունների շտկման) գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

05.06.2019թ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ին, ծանուցվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին: 05.06.2019թ մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթեր:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց փաստաթղթերը, որի արդյունքում՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում նշված «Ֆլեշ» ՍՊԸ-ի 30.05.2019թ դրությամբ 286000 (երկու հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամի չափով պարտավորությունը դրոշմանիշային վճար է և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկատեսակների և վճարների մասով չունի պարտավորություններ: Միևնույն ժամանակ ներկայացված նմանատիպ տեղեկանքում 31.05.2019թ դրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ը կատարել է չափից ավելի վճարում դրոշմանիշային վճարի և պետական տուրքի գծով, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկատեսակների և վճարների մասով չունի պարտավորություններ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Ֆլեշ» ՍՊԸ-ի որակավորումը «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատել բավարար:
   Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:
2. «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար: 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:
3. Անգործության ժամկետ կիրառելի չէ:
4. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքելու, այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան